ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 79-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 07-Ա որոշումը և հաշվի առնելով համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 03-ի N 1 որոշումը.

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ համայնքի բնակիչների կողմից ներկայացված և քվեարկության արդյունքում ընտրված առաջարկին՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ընտրված առաջարկի իրականացման ավարտից հետո ամփոփ հաշվետվություն ներկայացնել ավագանուն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՂԱՋԱՐՅԱՆ ՂԱՋԱՐ

ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ՄԱՐԻԱ ԱԶԱՏՅԱՆ

Հավելված
Արաքս համայնքի ավագանու
2024 թվականի սեպտեմբերի 10-ի
N 79-Ա որոշման

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԸ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ԱՌԱՋԱՐԿԻ ԲՅՈՒՋԵՆ
1	Գայ գյուղի կանգառների փոխարինում	Հակոբջան Հովսեփյան	5 000 000

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Արաքս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկի իրականացմանը հավանություն տալու մասին

1. Նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագիծը մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:
Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի «03» հուլիսի 2024 թվականի որոշումը:
Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ներկայացվող առաջարկների առաջարկները ընտրվել են հաշվի առնելով սահմանված չափանիշները: Ընտրվել է Գայ գյուղի բնակիչ Հակոբջան Հովսեփյանի առաջարկը՝ այն իրականացվում է Արաքս համայնքի տարածքում, առաջարկի իրականացումը ներառվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մեջ, առաջարկի իրականացման համար անհրաժեշտ նախահաշվային գինը չի գերազանցում ավագանու կողմից մասնակցային բյուջետավորման համար հատկացված 5 000 000 դրամը, առաջարկով նախատեսվող նախագիծը ընթացիկ ծախս չէ և ներառված չի համայնքի բյուջեում կամ զարգացման ծրագրերում, առաջարկի իրականացումը տեխնիկապես հնարավոր է: Ծրագիրը հավաքել է ամենաշատ ձայները:
2. Նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
Արաքս համայնքի ավագանու «Արաքս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկի իրականացմանը հավանություն տալու մասին» նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:
3. Նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին.
Նախագծի ընդունման կապակցությամբ Արաքս համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում, իսկ կապիտալ ծախսերի հոդվածով ծախսերը կավելանան 5 000 000 դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ.ՂԱԶԱՐՅԱՆ